

ИСТОРИЯ

Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուչ Մ. Տամատյանի գործունեությունը Կիլիկիայում 1918-1920 թթ.

Սարգսյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 355/359:930(479.25); EDN: MZCQGG; DOI: 10.58587/18292437-2023.1-36

Հանգուցաբառեր՝ Կիլիկիա, ինքնապաշտպանություն, ֆրանսիական զինվորական իշխանություն, Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչը, Ազգային-ազատագրական պայքար, տեսարան, դիվանագիտական գործունեություն, համախմբում, կազմակերպչական աշխատանք:

Деятельность уполномоченного представителя национальной делегации М. Таматяна в Киликии в 1918-1920 гг.

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)
sargsyansuren@yandex.ru

Аннотация. Одним из лучших периодов жизни видного деятеля армянской национально-освободительной борьбы М. Таматяна был период его патриотической деятельности в Киликии в 1918-1920 гг. Первая мировая война завершилась Мудросским перемирием, после которого французские власти, захватившие Киликию, пообещали независимость армянам, чудом спасшимся от геноцида и изгнанным в сирийские пустыни. Киликийские армяне начали постепенно возвращаться и обустраивать родные края.

В 1918 г. М. Таматян, в качестве уполномоченного представителя Национальной делегации, прибыл в Киликию и с присущим ему непоколебимым патриотизмом впрягся в сложное дело организации жизни местного армянства, сближения отношений с французскими властями, обеспечения противостояния продолжающимся нападением кемалатюркских головорезов и урегулирования других актуальных вопросов. Надеясь на поддержку французских военных властей, Таматян даже попытался провозгласить автономию в Киликии. Однако, переориентировавшиеся на Турцию французы, забыв об обещаниях, данных армянам, военной силой разогнали новообразованное правительство армян. Разочарованный этими реалиями Таматян в крайне подавленном состоянии покинул Киликию.

Ключевые слова: Киликия, самооборона, французская военная власть. Уполномоченный представитель национальной делегации, Национально-освободительная борьба, теоретик, дипломатическая деятельность, консолидация, организационная работа

The Authorized Representative of the National Delegation M. Tamatyan's Activity in Cilicia in 1918-1920

Sargsyan Suren T.

*Doctor of Sciences in History, professor,
Leading Researcher at the NAS RA Institute of History (Yerevan, RA)*
sargsyansuren@yandex.ru

Abstract. One of the best periods of the life of M. Tamatyan, a prominent figure in the Armenian national liberation struggle, was the period of his patriotic activity in Cilicia in 1918-1920. The First World War ended with the Armistice of Mudros, after which the French authorities, who seized Cilicia, promised independence to the Armenians who miraculously escaped the genocide and were exiled to the Syrian deserts. Cilician Armenians began to gradually return and equip their native lands.

In 1918, M. Tamatyan, as an authorized representative of the National Delegation, arrived in Cilicia and, with his inherent unshakable patriotism, harnessed himself to the difficult task of organizing the life of the local Armenians, rapprochement with the French authorities, ensuring opposition to the ongoing attacks of the Kemalaturk cutthroats and settling other topical issues. Hoping for the support of the French military authorities, Tamatyan even tried to proclaim autonomy in Cilicia. However, the French, reoriented towards Turkey, having forgotten about the promises given to the Armenians, dispersed the newly formed government of Armenians by military force. Disappointed by these realities, Tamatyan left Cilicia in an extremely depressed state.

Keywords: Cilicia, self-defense, French military power. Authorized representative of the national delegation, National Liberation Struggle, the theorist, diplomatic activity, consolidation, organizational work.

Նախարան

Հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքում շատերը հերոսացան՝ Արաբո, Անդրանիկ, Հրայր, Դուման, Մուրադ, Եկարյան: Անկասկած, այդ նվիրյալների կոհորտայում անփոխարինելի գարծունեությամբ իր արժանավոր տեղն ունի աննկուն մարտիկ, հասարակական-քաղաքական և կուսակցական գործիչ, գրող, թարգմանիչ, մանկավարժ **Միհրան Տամատյանը** (1863-1945 թթ.): Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա ավարտել է Վենետիկի Մուրատ-Ռափայեյան վարժարանը: Եղել է ուսուցիչ Կոստանդնուպոլսում, Ադանայում, Մուշում և հայկական դպրոցների տեսուչ՝ Տուրուբերանում ու Վասպուրականում: 1890 թ. Հնչակյան կուսակցության ակտիվ անդամը Գում Գափուի ցույցին մասնակցելու համար հալածվել է և ստիպված Պոլսից հեռացել Աթենք: 1891 թ. վերադարձել է Սասուն և տեղի հայերին նախապատրաստել ինքնապաշտպանության: 1893 թ. ձերբակալվել է և մեկ տարի բանտարկվել Պոլսում: 1897 թ. հեռացել է Հնչակյան կուսակցությունից, եղել է Վերակազմյալ Հնչակյան (ՎՀԿ), ապա նաև Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության (ՀՍՌԿ) համահիմնադիրներից: Որպես Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ ընդգրկվել է Պողոս Նուբարի գլխավորած ազգային պատվիրակության կազմում: Փորձել է Կիլիկիայում ստեղծել հայկական ինքնավար պետություն [18; 22; 24]:

Սովորաբար նշանավոր անձանց կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրություններում հեղինակները զովարանում, գունազարդում, իսկ երբեմն էլ՝ ուղղակի սևացնում են նրանց: Մակայն ովքեր անդրադարձել են Մ. Տամատյանին, միշտ դրական են արտահայտվել: Մի բան, որ մեզանում այնքան էլ հաճախ չի պատահում և վկայում է, թե ինչպիսի խելացի, հավասարակշռված ու լայն մտահորիզոնի տեր գործիչ է եղել նա: Վայելել է ժամանակակիցների վստահությունը, կարողացել է վեր կանգնել կուսակցական և գաղափարական սահմանափակումներից, հավատացել հայության լուսավոր ապագային և անմնացորդ ծառայել դրա իրականացմանը. «...Տարօնի յեղափոխական շարժման նախահայրը եղաւ Միացեալի ընդհանուր տեսուչ Մկրտիչ Մարեանը, որուն կրթական առաջին հունձքերն էին Հրայրը, Վաղարշակը, Գեղամը, Կոտոյի Հանին, Գառնենու Մկրտիչը, Վարդան վարդապետը, Խարախանեան և շատ շատեր, իսկ Մուրատը և Տամատեանը ի մի հաւաքեցին Երկրի ընթրատ տարրերը» [11, էջ 126]:

Մեփական ուժին կոթնելու գաղափարով տոգորված հայ ազատագրական շարժումն առաջին փուլում իր գլխավոր նպատակը համարեց նախ՝ կրթել-լուսավորել ժողովրդին և

ապա՝ պայքարել նրա ազատության համար: Արդյունքում մեծացավ մի սերունդ, որն այլևս զրագետ էր, կարդացած և տեղյակ էր եվրոպաներում ընթացող հեղափոխական ոգորումներին: Մ. Տամատյանն այդ սերնդից էր և «գրել պատմությունը 19-րդ դարու աւարտին և 20-րդ դարու սկիզբը Արևմտահայաստանի ու Կիլիկիոյ մէջ ծաւալած ազգային ազատագրական շարժումներուն: Ձեր դիմաց պիտի գտնէք անպայման Տամատեանը՝ իբրև արձանացեալ խորհրդանիշը մտաւորական յեղափոխականի և աննահանջ կազմակերպիչի դիմադրական թէ՛ կամաւորական շարժումներու» [10; 16, էջ 7]: Գործիչ, ով ա) կրթության գործի նվիրյալ-մանկավարժ էր, բ) ազատագրական պայքարի գաղափարախոս և և քարոզիչ, գ) հեղափոխության և ինքնապաշտպանության կազմակերպիչ, դ) կուսակցական գործիչ, հիմնադիր, ղեկավար, ծրագրերի հեղինակ, ե) Եղել է Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչը և Կիլիկիայի հանրապետության հռչակման նախաձեռնողն ու վարչապետը, զ) ռամկավար մի քանի պարբերականների հիմնադիր-տեսաբանը, է) հրապարակախոս, ազգապահպանության ջատագով, ը) բանաստեղծ-լեզվաբան:

Նա մեր պատմության «ազատագրական, հասարակական և մտաւորական բովանդակութիւն տոռոդ ռահվիրաներու փառանգէն էր» [32] և երիտասարդությունից մինչև այեհեր տարիքն ամբողջական նվիրում, անկոտրում հավատ դրսևորեց մեր ժողովրդի պայծառ ապագայի հանդէպ: Մթափ միտք ուներ, մեծ սիրտ և զգայուն հոգի, որոնք համադրված էին գեղեցիկ առնական մարմնում: Մինչև վերջին շունչը քննադատող, խորաթափանց և պրակտիկ գործիչն ու կազմակերպիչ ղեկավարը հավատարիմ մնաց ազատագրական շարժմանն ու իր սկզբունքներին: Նա ուղղամտության, պարկեշտության և ճշմարտության ջատագովն էր, անշահախնդիր ու «անանձնական նուիրումով ազատագրական շարժման ճիշդ ուղին ընթրնող և գայն գործադրող» [28] անձնավորություն:

Կուսակցաշինության գործունեությանը զուգընթաց Մ. Տամատյանը կարևոր դերակատարություն է ունենում Եգիպտոսի Ազգային միության, Կամավորական շարժման, Հայկական լեզեռնի ստեղծման և Ազգային պատվիրակությանը բոլորանվեր ծառայելու գործում: 1918-1920 թթ. Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների և Տամատյանի գործունեության մասին պահպանվել և մեզ են հասել որոշ արխիվային վավերագրեր, նամակներ և այլ տեսակի գրություններ [1, ֆ. 57, ց. 2, գգ. 830, 838, ֆ. 114, ց. 2, գգ. 86, 103, ֆ. 200, ց. 1, գ. 546, ֆ. 205, ց. 1, գ. 780, ֆ. 408, ց. 1, գգ. 124, 142, ֆ. 430, ց. 1, գ. 941, գ. 337, թթ. 1-25, գ. 825, ց. 1, թթ. 8-17, ֆ. Ց. 1, գ. 790, թ. 1, 807, ց. 1, գ. 807, թթ. 1-

15, գ. 826, թթ. 1-5, 295, թթ. 21-29, ց. 1, գ. 807, թթ. 1-3, ց. 1, գ. 340, թթ. 1-2, ց. 1, գ. 817, թթ. 19-39; 2, Արշակ Ալպոյանյանի արխիվ, թղթ. 14, վավ. 292; 3, Արշակ Չոպանյանի ֆոնդ, IV բաժին, թիվ 389, 392, 3987]: Այդ շրջանի հիմնահարցերն ուսումնասիրելուն մեծապես նպաստում են նաև զգալի թվով հուշագրություններն¹ ու մամուլում սփռված հրապարակումները²: Սակայն դժբախտաբար հուշագիրները «*ցայտնապես իրարսե ընդօրինակած են իրենց յուշերը, յանասի գրեթե բառացիորեն*» [25, էջ 4] և շատ տեղեկություններ պարզապես դուրս են մնացել և մեզ չեն հասել: Վերջինների մեջ շահեկանորեն առանձնանում են հատկապես Միհրան Տամատյանի հուշերը [16, էջ 7]: Մասնավորապես՝ հուշագրության վերջին էջերում տեղ գտած հեղինակի ներկայացրած լուսաբանությունները Կիլիկիայի անկախության հռչակման արժևորման վերաբերյալ: Վերջին տարիներին որոշ ուսումնասիրողներ ևս երբեմն անդրադարձել են հիմնահարցին [13; 15; 17; 19; 22; 37; 38]³:

Գրվել են նաև Կիլիկիայի այդ շրջանի պատմությանը վերաբերող հայ և օտար հեղինակների մի քանի ուսումնասիրություններ⁴: Այս առումով

շահեկանորեն առանձնանում են Ս. Պողոսյանի «Կիլիկիան հայ հասարակական-քաղաքական շրջանակների և Անտանտի երկրների ծրագրերում (1914-1918 թթ.)» 1916 թ. պաշտպանված դոկտորական ստենախոսությունը և թեմային առնչվող մի շարք հոդվածներ⁵: Դրանցում լուսաբանվել են պատերազմի տարբեր փուլերում հայության և Անտանտի երկրների հետաքրքրությունները Կիլիկիայի նկատմամբ, նրանց միջև տեղի ունեցող դիվանագիտական պայքարն ու բանակցությունները: Ներկայացվել են մեծ տերությունների տարբեր գործիչների ու զերատեսչությունների տեսակետներն ու հակասությունները Կիլիկիայի սպագայի հարցում: Վերջին տարիներին որոշ ուսումնասիրողներ ևս երբեմն անդրադարձել են հիմնահարցին [13; 15; 17; 19; 21; 22; 24; 36; 37; 38]: Սակայն, ցավոք, բացի միմյանց կրկնող ՌԱԿ որոշ գործիչների հրապարակումներից, վերջին երկու-երեք տասնամյակում Մ. Տամատյանի գործունեության պատմությունը միայն տողերիս հեղինակն է ուսումնասիրում և լուսաբանում⁶:

Կարևոր է նաև «Կիլիկեան երազին նաւորդ» [10; 16, էջ 7] Միհրան Տամատյանի կյանքին, հայ ազգային-ազատագրական պայքարին և հասարակական-քաղաքական գործունեությանը նվիրված Պ. Տեփոյանի շահեկան

¹ **Թաթուլեան Գ.**, Անթեղում զաղտնիքներ, Պէրոյթ, 1967; **Մ. Ն.**, Կիլիկեան յուշեր, «Նոր Հանրն», 1956, թիւ 8-9-10; **Պոյանեան Տ.**, Հայկական լեզունը, պատմական յուշագրութիւն, Ուօթրթաթաւն, 1965; **Թէրզեան Ս.**, Կիլիկիոյ աղէտը, Կ. Պօլիս, 1912; **Թէրզեան Ս.**, Հանրնի ութամսեայ դիւցազնամարտը, Բ. Տպագրութիւն, Պուէնոս Այրէս, 1956; **Նորաշխարհյան Լ.**, Չէյթունը 1914-1921 թթ. (հուշեր), Ե., 1984; **Ոսկերչեան Է.**, Կիլիկեան յուշեր (1907-1929), Հալէպ, 1930:

² Այդպիսի հրապարակումներ կան Կահիրէի «Արեւ» (ՀՄՌԿ), Կ.Պոլիսի «Ժողովուրդի Չայնը-Ժամանակ», Ադանայի «Կիլիկիա» (ՀՅԴ), «Արձագանգ Կիլիկիոյ» (ՄԴՀԿ), «Հայ Չայն» (ՀՌԿ), «Կիլիկիան Դուրիանդակ» (Վերակազմյալ-ԱԿ), «Նոր Հանրն», Բոստոնի «Հայրենիք» (ՀՅԴ), «Պայքար» (ՌԱԿ) և այլ պարբերականներում:

³ Նաև՝ **Պետրոս Յ.** Տեփոյեան, Միհրան Տամատեան (1863-1945), Պէրոյթ, առանց հրատարակչության, 1964; **Pichon, Jean Le partage du Proche-Orient**, Paris, J. Peyronnet, 7, rue de Valois, 1938; **Խառատյան Ա.**, «Արևելյան մամուլ թերթը (1919-1922թթ.)», Պատմամաքանասիրական հանդէս, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2014:3(80); **Մարգայան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019:

⁴ **Աղամեան Գ.**, Կիլիկեան դրուագներ, Փարիզ, 1921; **Աթանասեան Ա.**, Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ), Փարիզ, 1937, **Ասպետ Ա.**, Դրուագներ Հանրնոյ հերոսամարտէն եւ հերոսին ողիսականը, Պէրոյթ, 1961; **Չէյթունցեան Նազարէթ**, Չէյթունի վերջին դէպքերը (1919-1921), Ադըքսանդրիա, 1922; **Թորոսյան Ծ.**, Կիլիկիայի հայությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Արեւ», օրաթերթ, Գահիրէ, 29 Յունուար, 1970; **Իզմիրլեան Կ.**, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսութիւն), Պէրոյթ, 1964; **Լէօ**, Թուրքահայ յեղափոխութեան զաղափարաբանութիւնը, Բ. Հատոր, Փարիզ, 1935; **Կիրակոսյան Ջ.**, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Ե., 1965; **Հայոց պատմություն**, հ. IV, գիրք առաջին, Նորագույն

Ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան, Չանգակ-97 հրատարակչություն, 2010, 797 էջ; **Մանջյան Հ.**, Հանրնի հերոսական ինքնապաշտպանությունը 1920 թվականին, Երևան, «Նարեկացի» հրատարակչություն, 1991, 95 էջ; **Սահակեան Ռ.**, Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Ե., 1964; **Սահակյան Ռ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Ե., 1970; **Քիլբընեան Վ.**, Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919; **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Ե., 2005; **Адамов Е.**, Турция и великие державы, М., 1923; **Боев Ю.**, Ближний Восток во внешней политике Франции (1898-1914), Киев, 1964; **Ahmad Rustem bey**, La Paix d'Orient et L'accord franco-turc, Paris, 1922; **Medlicott W.**, The Pre-war population of Cilicia, London, 1920:

⁵ **Պողոսյան Ս.**, Կիլիկիան հայ հասարակական-քաղաքական շրջանակների և Անտանտի երկրների ծրագրերում (1914-1918 թթ.), դոկտորի գիտական աստիճանի հայցման ստենախոսության սեղմագիր, Ե, 2016: 4. Կիլիկիան ազատագրելու ծրագրերը 1915թ., «Պատմա-բանասիրական հանդէս», Ե., 2006, թիվ 2, էջ 13-21: Ռուսաստանը և Կիլիկիայի հարցը 1914-1916 թթ., «Խ.Արմավյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր», Ե., 2008, թիվ 1-2 (7-8), էջ 23-29: Մեծ Բրիտանիան և Կիլիկիայի ազատագրման հարցը Առաջին աշխարհամարտի տարիներին, «Լրատու: Գիտական հոդվածների ժողովածու», Ե, 2012, թիվ 2, էջ 109-119: Կիլիկիան հայ գործիչների ծրագրերում Առաջին աշխարհամարտի տարիներին, «Էջմիածին», 2014, թիվ 8, էջ 99-126: Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցը ռուսական դիվանագիտության 1914-1915 թթ. զաղտնի ծրագրերում, «Վեմ», Ե., 2015, թիւ 2 (50), էջ 59-77:

⁶ Ամենամոտ ժամանակներում նախատեսում ենք Մ. Տամատյանին նվիրված ծավալուն մենագրություն հրապարակել:

ուսումնասիրությունը [24]: «Հեղինակը նշելով, որ ռամկավար Մ. Տամատյանն «առաջնորդող ծնած էր եւ առաքելական նուիրումով չափազանց քիչ հասարակականներ ունեցող դասական դէմք մըն էր» [24, էջ 148] և իր «կեանքի ամբողջ տեսողութեան իր տեսակէտներուն, համոզումներուն եւ շարժումներուն մէջ միշտ ալ եղած է հետևողական եւ անտեղիտալի» [24, էջ 149], արեւց ամեն հնարավորը Կիլիկիայի փրկության համար, սակայն Ֆրանսիական իշխանությունների թուրքամետ դիրքորոշումը ձախողեց այն: Նույն գաղափարն է պաշտպանում նաև մեկ այլ՝ սկզբում հնչակյան հետո ռամկավար գործիչ Ավետիս (Ապահ) Պետրոսյանի (1872-1928) կյանքին ու գործունեությանը նվիրված Մասիս Պետրոսյանի ուսումնասիրությունը [20.3]: Ներկայացնելով հետեղեռնյան Կիլիկիայում Ապահի գործունեությունը, հեղինակը նշում է, որ Ապահն արեւց ամեն հնարավորը կիլիկիահայությանը թուրք հրոսակներից պաշտպանելու և Կիլիկիայում հայոց պետականությունը վերականգնելու համար, սակայն առատ խոստումներ շռայլած Անտանտի երկրները խոստումնազանց եղան, սակարկության ապրանքի նման վաճառքի հանեցին Կիլիկիան ու տեղի հայությանը մատնեցին բախտի քմահաճույքին:

Փարիզի Ազգային պատվիրակության, հայ կուսակցությունների, նշանավոր այրերի, եվրոպական տերությունների, արհեստածին Ռուրքիայի հանրապետության և «Կիլիկեան Երագին» առնչվող այլ գործոնների ու դերակատարների ու դրանց միջև եղած հարաբերությունների լուսաբանմանը նվիրված Պ. Յափուճյանի փաստահարուստ սովորաձավալ ուսումնասիրությունը [25] լուրջ ներդրում է քննառարկա հիմնախնդրի պատմության լուսաբանման համար, սակայն հեղինակը երբեմն հայտնել է ոչ այնքան իրատեսական, երբեմն էլ՝ կողմնակալ տեսակետներ: Հիմնահարցի մասին զգալի տեղեկություններ են պարունակում նաև Է. Բարսեղյանի [20.2], Մ. Սերոբյանի [20.1], Վ. Մալեգյանի [20.4] և այլ հեղինակների հուշագրություն-ուսումնասիրությունները:

Ընդհանուր առմամբ, հայրենիքի ու սեփական ժողովրդի անմնացորդ նվիրյալ Մ. Տամատյանի գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ կարևոր փուլերի՝

1. նախակուսակցական՝ 1880-1889 թթ.,

2. Մուշ-Տարոն-Մասունում և Կ.Պոլսում հեղափոխական բուռն գործունեության՝ 1889-1896 թթ. Հնչակյան կուսակցական շարքերում: 1896-1898 թթ. Վերակազմյալ հնչակյան էր, 1898-1906 թթ. անկուսակցական, 1906-1908 թթ. կրկին Վերակազմյալ հնչակյան, 1908 թ.-ից ՀՄԲԿ հիմնադիր-անդամ:

3. Կիլիկիայում որպես Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ՝ 1918-1920 թթ.,

4. Հայահամախմբման, հայապահպանության-կուսակցաշինության և ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության՝ 1920-1945 թթ.:

Կիլիկիահայության վիճակը Մուղղոսի գինադադարից հետո

XX դարի սկզբին Կիլիկիայում հայության վիճակն այնքան էլ բարվոք չէր. «հայերու թիւը 100-130 հազար, ցիրուցան, հիւսուած օտար տարրերու հետ: Բսկ գուտ հայաբնակ Ունիս, Ատանա, Հանրն, Մարաշ, Չեյթուն, Չորք Մարգուան, Քեսապ իրարմէ հեռու էին...» [23, էջ 536]: Այս վիճակն անշուշտ խոչընդոտում էր ազատագրական պայքարին: Մյուս կողմից էլ տեղի հայերի մեծամասնության թրքախոս լինելն ու կրոնական տարանջատումները (առաքելական, կաթոլիկ և այլն) ջլատում էին կիլիկիահայության ուժերը: Բացառությամբ հայաշունչ Չեյթունի, Չորք Մարգվանի ու Քեսապի, թույլ էր նաև ազգային գիտակցությունը:

1908 թ. Երիտթուրքերի «հեղափոխության» խաբկանքը և սահմանադրության հռչակումը էական փոփոխություններ չմտցրեցին արևմտահայերի դրության մեջ, սակայն աշխուժություն առաջացրեցին ազգային-քաղաքական կյանքում: Կիլիկիայի հայերը ևս կարողացան առաջադիմել տնտեսական, մշակութային ու հասարակական ասպարեզներում և իրենց ձեռքում կենտրոնացրին երկրամասի առևտուրն ու արդյունաբերությունը: Դա որոշ հույսեր առաջացրեց կիլիկիահայության շրջանում: Սակայն սահմանադրական կարգերից դժգոհ թուրքական հետադիմական ուժերը հայերին ամբաստանեցին որպես «հուրիեթ» (սահմանադրական կարգերի հաստատմանը նպաստող) բերողներ, իբրև իշխանությունը թուրքերից իլելու և «հայկական թագավորությունը» վերականգնելու նպատակ ունեցողներ և 1909 թ. ապրիլի 1-4 և 12-14-ին կազմակերպեցին Ադանայի և Հալեպի վիլայեթների հայ բնակչության զանգվածային կոտորածը, որին զոհ գնացին շուրջ 30 հազար հայեր: Դեռթեղը /Չորք Մարգվան/, Հանրը, Միսը, Չեյթունը, Շեյխ-Մուրադը, Ֆընտընագը և մի շարք այլ բնակավայրեր հերոսական ինքնապաշտպանությամբ կասեցրին թուրքերի հարձակումները: Այդ իրադարձությունները եկան ապացուցելու, որ սահմանադրության խոստումներն ընդամենը սին պատրանքներ էին և հայերը հույսը միայն իրենց վրա պետք է դնեին:

Առաջին համաշխարհային պատերազմը հայության շրջանում թուրքական բռնապետությունից վերջնականապես ազատագրվելու հույսի, բայց նաև նոր կոտորածների վտանգի երկակի զգացումներ էր արթնացնում: Հայ գործիչները, օգտվելով միջազգային նոր իրավիճակից, ձգտում էին Անտանտի երկրների աջակ-

ցույցամբ ու հովանավորությամբ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի համար ինքնավարություն ձեռք բերել: Սակայն օգտվելով պատերազմի ստեղծած հնարավորությունից, թուրքական իշխանությունները որոշեցին ցեղասպանության միջոցով «լուծել» Հայկական հարցը [12]: Վրա հասած եղեռնը չըջանցեց նաև կիլիկիահայությանը: Նրանցից շատերին թուրքերը ֆիզիկապես ոչնչացրին, իսկ հրաշքով կենդանի մնացածներին հայրենագրկելով քշվեցին սիրիական անապատներ:

Պատերազմն ավարտվեց Անտանտի երկրների հաղթանակով և Կիլիկիան զինագրավված ֆրանսիական վարչական վերահսկողության դեկավար գնդապետ Է. Բրենոնը⁷ ժամանելով Կիլիկիա հայտարարեց, ժամանելով Կիլիկիա, հայտարարեց, որ հայերը պետք է «տեր դառնան իրենց երկրին: *«Մենք պիտի առաջնորդենք զիրենք, մինչև որ անոնք աճին և սկսին ինքզինքնին կառավարելու գործին հաջողի»* [14, էջ 210] և *«... պետք է այժմէն պատրաստեք վարչագետ մարդիկ երկրին վարչությունը ձեռք առնելու համար»* [34]: Կիլիկիահայերը, հավատալով այդ խոստումներին, 1919 թ. սկսեցին վերադառնալ և վերականգնել հայրենի օջախները:

Ֆրանսիացիների զինագրավելուց հետո Կիլիկիայում չափազանց բարդ քաղաքական իրավիճակ էր ստեղծվել. *«Տարագրեալներ կը հասնին հոս շարան-շարան ամէն օր՝ չափազանց արտակէղէք վիճակի մէջ: Չորս տարուան տառապանքը զանոնք կմահաբի վերածած էր: Անոնց կործրը անկարող էր վեր պահելու համար մեռելացած մարմինը»* [1, ֆ. 430, ց. 1, գ. 811, թթ. 6-7]: Երկրամասում նաև անցանկալի իրավիճակ էր, որի անմիջական հետևանքն էր *«զինուորներու յուսալքումն ու թուլացումը և ժողովուրդին դժգոհությունը»* [1, ֆ. 430, ց. 1, գ. 811, թթ. 12]:

Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը Կիլիկիայի տեղական բոլոր կառույցներին կոչ էր անում սատարել և ամէն ինչով օգնել հայությանը: Դիմելով այդ շրջանում տեղի հոգևոր առաջնորդներից Գևորգ ծայրագույն վարդապետ Արսլանյանին նա կոչ էր անում *«ազգակիցներու թշուառ վիճակը մեղմելու համար»* անել հնարաւոր ամէն ինչ [1, ֆ. 430, ց. 1, գ. 676, թ. 8] և թուրքերի հետ բախումներ թույլ չտալու համար. *«առևտրական յարաբերություններ մշակել թուրքերու հետ՝ ապահովելով իրենց շահերը, հեռու մնալ անտեղի ցոյցերէ. արգիլել օրիի, գինիի գործածություն և ուէ անպատեհ ընթացքի տեղի չտալու համար այսագիներու հետ քաղաքական*

խնդրոց շուրջ չվիճիլ» [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 101-103]:

Կացության ականատես և Կիլիկիայի ապագայով մտահոգ գործիչներն ավելի ուշ՝ այլ ելք չտեսնելով՝ անհրաժեշտ էին համարում Կիլիկիան Հայաստանի Հանրապետության մաս դարձնել և այդ հարցով բազմիցս դիմում էին Պ. Նուբարին: Միաժամանակ զգուշացնելով, որ *«պետք չէ մոռնալ, թէ Կիլիկիան ինչ դեր ունի կատարելիք նորակազմ Հայաստանի համար: Եթէ մեր նպատակն է վերստեղծել Հայաստանը, պետք չէ մոռնալ, թէ ամենահին Հայաստանը ստեղծուած է Սեբաստիոյ և Կիլիկիոյ հողերու վրա»* [1, ֆ. 430, ց. 1, գ. 807, թթ. 16-17]:

Մ. Տամատյանը Կիլիկիայում Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ

Ազգային-ազատագրական պայքարի քաջամարտիկն ու տեսաբանը XX դարի սկզբին հանգրվանել էր Եգիպտոսում. *«Եղափոխական գործունէութեան ասարտէն ետք, ան Եգիպտոսի մէջ, Մանթաշէֆ Տան մօտ կարևոր պաշտօն կը վարէր»* [23, էջ 930]: Իսկ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո ընկերների հորդոր-հրավերով սկսեց զբաղվել կուսակցաստեղծ գործունէությամբ: Հեղինակեց նույն թվականին մի քանի քաղաքական ուժերի միաձուլման արդյունքում ստեղծված Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցության ծրագիր-կանոնագիրը⁸: Ամուսնացած և երկու դուստրերի հայր Տամատյանը 1917 թ. Եգիպտոսի ազգային միության առաքելությամբ Փարիզում էր գտնվում, երբ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարից այդ նույն պատվիրակության Կիլիկիայում լիազոր ներկայացուցիչը դառնալու առաջարկություն ստացավ: Սակայն ընտանեկան պարտականությունները *«զինք կը տատանեցնէին լքելու իր պաշտօնը, որուն հետևանքով, ան պիտի կորսնցնէր իր իրաւունքները»* [25, էջ 930]:

Այդ գործընթացի մասին մանրամասն տեղեկանում ենք հետևյալ չորս նամակներից⁹, որոնցից պարզ է դառնում, թե Տամատյանը հանուն իր ժողովրդի բաղձանքների, հարազատներից հեռու, հանգիստ և շահութաբեր գործը թողած հինգ տարի աստանդական կյանք ապրելով՝ ինչպիսի գոհողություն էր հանձն առնում: Միակ բարեբախտությունն այն եղավ, որ ընտանիքը Փարիզ չտեղափոխվեց, որովհետև Տամատյանն ինքն էլ Փարիզում չմնաց, այլ որպէս Ազգային պատվիրակության ներկայացուցիչ շուտով ուղարկվեց Հռոմ: Սակայն այստեղ ևս երկար չմնաց և սեփական ժողովրդին ծառայելու պատրաստակամությամբ, նույն

⁷ Գնդապետ Էդուարդ Բրենոնը (1868, Փարիզ - 1948, Փարիզ): 1919 թ. հունվարի 1-ից 1920 թ. սեպտեմբեր եղել է Կիլիկիայի ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավարը:

⁸ Այդ մասին մանրամասն տես [20.5]:

⁹ Նամակներն առանց որևէ միջամտության հրատարակել է Ա. Յափուճեանը [25, 930-940 էջեր]:

կարգավիճակով ուղարկվեց այս անգամ արդեն Կիլիկիա:

Պողոս Նուբարը Տամատյանի խնդիրը կարգավորելու նպատակով 1917 թ. նոյեմբերի 19-ին դիմում է Մանթաշով ընկերության նախագահ Մութաֆովին [8, էջ 82]. «Պատուիրակությունը կարիքը պիտի ունենայ մնայուն աջակցության բազմաթիւ անձերու՝ որքան ձեռնհաս նոյնքան նուիրեալ և հարմար կը յամարէ Փարիզի մէջ ներկայութիւնը Տամատեանի, որուն հանդէպ ես ամբողջական վստահութիւն ունիմ, այժմ կրկայ անհրաժեշտ, հայկական հարցերուն մէջ իր փորձառութիւնը ունի և յկարենալով հրաժարիլ իր աջակցութենէն, լաւագոյնս ընելու՝ հարթելու համար այն դժուարութիւնները՝ մեծ վերապահութեամբ համաձայնեց» [25, էջեր 932-933]: Մութաֆովը համաձայնում է և ֆինանսական խնդիրը կարգավորվում է, սակայն ակնհայտ էր, թե ինչպիսի մեծ գոհողության էր գնում Տամատյանը, քանի որ հրաժարվելով «Մանթաշէֆ Տան հաշուակարգայեանի իր պաշտօնէն, ոչ միայն պիտի կորսնցնէ կարևոր պաշտօն մը, այլևս պիտի զրկուի սպազայի պատեհութիւններէ, զորս տասնևչորս տարիներու իր ծառայութիւնը յուսալ կուտան իրեն սպազայում ևս սպասով զգարու» [25, էջեր 932-933]: Այս նամակի պատասխանը մենք չունենք, բայց նկատի ունենալով, որ Տամատյանը չորս տարի տուն չվերադարձավ, իսկ ընտանիքը բարվոք վիճակում ապրել էր, հաստատվում է, որ Մութաֆովը «նպաստաւոր հետևանք» էր տվել Պողոս Նուբարի դիմումին: Իհարկե, դա չէր մեղմում այն տխուր վիճակը, որում հայտնվել էր նրա ընտանիքը, որի մասին են վկայում ընտանեկան մի քանի նամակները:

Դրանցից առաջինը 1918 թ. հունվարի 14-ին Ալեքսանդրիայից գրել է դուստրը՝ Շաքեն և նկարագրել, թե որքան են կարոտում և սպասում նրա վերադարձին: Մյուսը 1918 թ. հունվարի 20-ին Փարիզից կնոջը՝ Չարուհուն, հասցեագրված Տամատյանի նամակն է, որով նա խնդրում է համբերատար լինել և «շրջանցել նյութական մանրուքները»: Դրանում մեծ հայրենասերը նաև «ի յայտ կը քերէ իր մեծ նուիրումը իր ժողովուրդին ու անոր դասին»: Հաջորդ նամակի հեղինակը ընտանիքի բարեկամ Գառնիկ Գլնյանն է, ով աշխատում էր Մանթաշովի գրասենյակում: Դիմելով Տամատյանին, նամակագիրը նշում է, որ նրան վերաբերում է «ինչպէս զաւակ մը պիտի գրեր հորը», քանի որ «Դուք Ազգային գործերու մէջ դատնութեան բաժակէն շատ անգամներ ընկած էք և այնպիսի հազուագիտ մարդերէն էք որոնք ուր որ ալ գտնուելու ըլլան, իրենց առաջնակարգ տեղը կ'ունենան նպատակի մը իրագործումին համար թափուած ջանքերուն մէջ: Ասիկա անժխտելի ճշմարտութիւն է...» [25, էջեր 934-941]: Չորրորդ նամակը գրել է Տամատյանի նվիրյալ, աստանդական կյանքի ուղեկից, նրա ցավերի ու

տառապանքների սրտակից տիկին Չարուհին: Չմանրամասնելով նշենք, որ այս չորս նամակներից պարզ է դառնում, թե Կիլիկիա գնալով ինչ մեծ գոհողություն էր հանձն առնում իր ժողովրդին անմնացորդ նվիրված Տամատյանը:

Տամատյանին որպես Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Կիլիկիա ուղարկելու հարցը Պողոս Նուբարն առաջին անգամ առաջ քաշեց 1918 թ. հոկտեմբերի 14-ին նրան հասցեագրած նամակով: Դրանում ասված էր. «Շատ պիտի ուզէիք ձեզ Հոն թողուլ, ուր Ազգային Պատուիրակութեան կարող մէկ ներկայացուցիչն ներկայութիւնը շատ անհրաժեշտ է այս պահուս. սակայն «La Voix l'Arménie»-ն մէկ կողմէն ձեր կարիքը ունի, և միւս կողմէ շատ կարևոր պաշտօն մը, որ ներկայիս իսկ զինք ստանձնողը կը պահանջէ, և ոչ ոք ձեզմէ աւելի լաւ կրնայ զայն վերցնել» [1, ֆ. 430, ց. 1, գ. 676, թ. 8; 39]: Ապա այդ նույն նամակում Նուբարը պարզաբանում է, որ 1916 թ. համաձայնագրով Սիրիայում և Կիլիկիայում Ֆրանսայի ներկայացուցիչ է նշանակվել Ժորժ Պիկոն, ով դիմել է իրենց, որ իր մոտ ներկայացուցիչ նշանակվի մեր հայրենակիցներից կարող և վստահելի անձ, ով կկարողանա օգնել իրեն «թուրքերուն կողմէ պարսպուած նահանգներուն վարչութիւնը կազմակերպելու: Այլ խօսքով, Ֆրանսայի Բարձր Բոմիստրին կողքին տալ տեսակ մը հայ Բարձր Բոմիստր մը» [25, էջ 944]: Այդ պաշտոնի համար, շեշտում է Պ. Նուբարը, պետք էր վստահելի մարդ, որը ծանոթ էր երկրին և ավելի հարմար է, քանի որ դա շատ կարևոր և շատ նուրբ պաշտոն էր, և այդ անձից է կախված այդ առաքելության հաջողությունը:

Ի դեպ, Կիլիկիայում ներկայացուցիչ ունենալու առաջարկն արել էին ֆրանսիացիները, իսկ այդ պաշտոնը Տամատյանին վստահելու գաղափարը հուշել էր ազգային գործիչ Հովհաննես Մասեհյանը¹⁰ [7, էջ 134; 25, էջ 946]: Այսպիսով 1919 թ. ապրիլին, «կ'որոշուի Տամատեանի մեկնումը Կիլիկիա, ուր կը հասնի նոյն տարուան Յունիսին» [25, էջ 949]: Հասնելով Կիլիկիա, Ս. Տամատյանը 1919 թ. հուլիսի 8-ին գրած նամակով իր առաջին տպավորություններով կիսվում է կնոջ՝ Չարուհու հետ: Նա գրում է, որ Կիլիկիան հիանալի երկիր է, կլիման եզրիպտականի նման: Միայն թե «քաղաքին մէջ տիրող աղտոտութեան մէջ գրեթէ ամէն մարդ առողջ է: 37 տարի առաջ այստեղ եղած են, և կրնամ ըսել թէ քաղաքը զգալի

¹⁰ Հովհաննես Մասեհյան (Խան-Մասեհյան, 1864, Թեհրան – 1931, Հարբին), թարգմանիչ, պետական հասարակական գործիչ, դիվանագետ, հրապարակախոս, մանկավարժ և խմբագիր: 1912 թ. եղել է Պարսկաստանի դեսպանը Գերմանիայում: Տիրապետել է հայերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին: Շատ հարցերում օգտակար խորհուրդներով օգնել է Պ. Նուբարին:

բարեփոխում մը չէ ստացած, այլ բարքերու, սովորութիւններու, քաղաքակրթութեան տարրական պահանջներու տեսակետէն թերեւս աւելի ետ ալ գացած է, բայց մարդիկ «չատրր»ներու տակ չեն բնակիր» [25, էջ 950]: Տեղացիները թեև կոպիտ են, նկարագրում է Տամատյանը, բայց շնորհքով անձինք էլ շատ կան: Աղանայի շրջակայքում գեղեցիկ այգիներ կան:

Ի վերջո Տամատյանը Կիլիկիա հասավ և 1919 թ. մայիսի 30-ին ստացավ Պ. Նուբարի հեռագիրը, որում ասված էր. «Չեզի Պատուիրակութեան Սուրիոյ և Կիլիկիոյ ներկայացուցիչ անուանեցինք, ինչպէս նաև անգլիական ու ֆրանսական քաղաքային թէ՛ զինուորական իշխանութեանց մօտ» [1, ֆ. 430, ց. 1, գ. 676, թ. 8]: **չենց այդ պահից էլ սկսվում է Կիլիկիայում որպէս Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ՝ դիվանագիտական-հայաիւմախմբման-կազմակերպչական՝ փուլը, որը տևեց 1919-1920 թթ.:** Ժամանակահատված, երբ Տամատյանի կենսագրությունն ու գործունեությունն անբաժան են այս ժամանակահատվածի Կիլիկիայի պատմությունից: Քանի որ Կիլիկիայի այդ շրջանի պատմության որ էջն էլ շրջենք, անպայման կնկատվի Տամատյանի կերպարն ու մատնահետքը, կյսվի նրա ոտնաձայնը: Աղանայում գրված բոլոր տեղեկագիրերը, բողոքագրերը, անկախ այն բանից, թե որ մարմնի կողմից են ներկայացված, միանշանակ նրա գրիչի արգասիք են: Երկու տարի նա Կիլիկիայում «ասրեցաւ դժնդակ կեանք մը, մտահոգութիւններով, յուսահարություններով, տառապանքով ու ցաւերով յի կեանք մը, և վերջնականապէս յուսաբեկ, վերադարձաւ Եգիպտոս»¹¹:

Չիմնախնդիրը խորությամբ հասկանալու համար, բնականաբար կարևոր էր նաև, թե ինչպիսին էր կիլիկիահայերի տեսակետն իրենց ապագայի վերաբերյալ: Պարզաբանելով խնդիրը, Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Մ. Տամատյանը Կ.Պոլսի հայոց պատրիարք Չավեն արքեպիսկոպոս Տեր Եղիայանին գրած նամակում շեշտում էր. «Չայաստանի կցում-հակառակ պարագային՝ բացարձակ ճանաչումը Կիլիկիոյ հայկական հայրենիքի հանգամանքին և ըստ այնմ էականապէս հայկական հիմունքներու վրայ հաստատուած տեղական ինքնավար կառավարություն մը հոգա-

տար պետության հովանիին տակ, ժամանակաւոր հանգամանքով, մինչև չայաստանի հետ ապագայ միացումը» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թ. 3]: Այնուհետև Մ. Տամատյանն ավելացնում է, որ ֆրանսիական իշխանությունների հետ «համաձայնած ենք առանց աղմուկի, առանց թմբկահարության աշխատիլ իրականացնելու մեր, վերոգրեալ ընդունուած պահանջները, որպէս զի թուրքերը աւելի չգրգռուին» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թ. 3]:

Չնայած հայերի կողմից ձեռնարկված զգուշավոր քայլերին՝ թուրքերը շարունակում էին հարձակումները հայերի վրա ու անխնա կոտորում նրանց: «Կիլիկիայում տիրում է սարսափի թագաւորությունը: Չայերի ջարդը շարունակում է»,- ազդարարվում էր հայկական տեղեկատվության և մամուլի գրասենյակի 1920 թ. Փետրուարի 13-ին տարածած հաղորդագրության մեջ [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 8ա-8բ]: Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղված¹² նույնաբովանդակ մեկ այլ գրության մեջ էլ Տամատյանը Մարաշի հայության կոտորածի և անհապաղ միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտության մասին ահազանգում էր. «Մարաշ, իր ամբողջ շրջանով, ոչ ևս է: 35-40.000 հայությունը օժտուած չայկական Կիլիկեան շրջանէ մը մէկ քանի հազար իպեակներ միայն, այսօր կիսամեռ կը թափառին ձյուններու մէջ, հազարաւորներու թաղումը իրենց աչքով տեսնելով վերջ, նոյն վտանգին ենթակայ» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 4-7]: Իսկ այնուհետև եզրակացնում, թե ֆրանսիական թողտվությունն էր, որ «տասնեակ հազարաւոր անմեղ ու ֆրանսաւեր հայերու կորուստին և կիլիկեան կործանումին պատճառ դարձաւ...» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 4-7]: Միևնույն ժամանակ Տամատյանը պահանջատիրոջ կեցվածքով դիմում էր նաև ֆրանսիական զինվորականներին, ահազանգում խիստ վտանգավոր կացության մասին: Գնդապետ Պրեմոնին հասցեագրած նամակում նա գրում էր. «Դրությունը ամենուրեք նոյնը լինելով, Մարաշի աղէտից յետոյ, ես իրաւունք ունեմ Չեզ ասելու, որ կամ դուք մեզ բացալայտօրէն ապահովություն կը խոստանաք և Կիլիկիոյ բնակչությանը կը պաշտպանէք, կամ պարտական էք մեզ ի վիճակի ընել մենք մեզ պաշտպանելու. մեզ տալով զէնք: Ամէն յապաղում կարող է հազարաւոր մարդկանց կորուստի պատճառ դառնալ» [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 17-19, թարգմանություն ֆրանսերենից, մեքենագիր]:

¹¹ Յավոք, Տամատյանի գործունեության այս՝ դիվանագիտական շրջանի մասին ցարդ որևէ ամբողջական ուսումնասիրություն չկա գրված: Նույնիսկ նրա միակ կենսագիր Պետրոս Տեփոյեանը հպանցիկ է անցել այս շրջանի վրայով: մեզ հաջողվեց ճշտել, որ 91 ծրարներում ամփոփված Տամատյանի ամբողջ արխիվը Տեփոյեանը փոխադրել է Բեյրութ, որտեղ, բացի թերևս Միքայել Նաթանյանի կողմից հիմնականում «Արեւ» թերթում հրատարակված մեծաթիվ փաստաթղթերի, մնացել է անգործածելի:

¹² Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղված բոլոր նամակների հիմնական հասցեատերը Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարն էր: Քանի որ արտասահմանյան երկրներ հասցեագրված բոլոր նամակները թուրքական հատուկ ծառայությունները բացում-ընթերցում էին, ուստի ապահովության համար դրանք սկզբում ուղարկվում էին պատրիարքին, իսկ վերջինս էլ իր հերթին՝ Նուբարին:

Վերլուծելով ստեղծված ծանր կացությունը Մուշեղ արքեպիսկոպոս Մերոբյանին¹³ գրած մի նամակում էլ Տամատյանը ցավով արձանագրում է այն տխուր իրողությունը, որ եվրոպական մեծ տերություններն իրենց երկդիմի քաղաքականությամբ այս անգամ էլ մեծ վտանգի էին ենթարկում կիլիկիահայության գոյությունն ընդհանրապես. «Ասոնք չեն ուզեր վերջնականապես գեշ մարդ լլլայ թուրքերուն և առհասարակ իսլամներուն հետ, տակաին չաթափեցան թրքական քաղաքականության երազներէն և հայերու նախնիրներուն և մոխրակոյտներուն վրայէն տակաին կը փորձէին թուրքերը, իսլամ տարրերը սիրաշահիլ» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 8-9]: Այնուհետև գործիչը պարզաբանում էր, որ պատմությունը կրկնվելու հասկություն ունի և խելացի, ուժեղ ու համախմբված ժողովուրդները՝ դասեր քաղելով այդ նույն պատմությունից՝ կրկնությունները վերաձևում են իրենց օգտին, մինչդեռ հայերը շարունակում են երազախաբությամբ տառապել: Մեկ այլ գրությունով էլ մտավախություն էր հայտնում, որ «Դասնկլեան սուրը միշտ կախուած է Կիլիկիոյ հայության գլխին վրայ» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թ. 22]:

Կիլիկիահայության ճակատագրով մտահոգ հայ գործիչները դիմումներ էին հղում միջազգային տարբեր կառույցներին, կոչ անում թույլ չտալ ցեղասպանված հայ ժողովրդի Կիլիկիայում ապաստանած բեկորներին ևս բնաջնջել [5, էջ 14]: Կ.Պոլսի հայոց պատրիարքի, Պ. Նուբարի և Ավ. Ահարոնյանի Փարիզի խաղաղության խորհրդաժողովի նախագահին ուղղված դիմումում ասվում էր, որ Մարաշում ապաստանած 40,000 հայերից «գոհուել են 20 հազարը, իսկ բնակչության մի մասն էլ բանտարկուած է» [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 21]: Կիլիկիայի մյուս քաղաքները ևս լուրջ սպառնալիքի տակ են, ահազանգում էին դիմումի հեղինակները. «Կիլիկիայում 200,000 հայեր կան: Անմիջական զինուորական օգնության անհրաժեշ-

տություն կայ և յանուն մարդկային խղճի, ձեռք առնել սգրո միջոցներ ընդհանուր ջարդը կանգնեցնելու և վերականգնելու անվտանգ դրությունը» [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 21]:

Ազգային պատվիրակության ղեկավարին նույնաբովանդակ գրություններ էր հղում նաև Տամատյանը: Անդրադառնալով Մարաշի կոտորածներին նա գրում էր. «1919 Հոկտ. 10ին քաղքին հայ բնակչության թիվը շրջակայքովը միասին՝ 29,600 հոգի է: Իսկ ողջ մնացողներու թիվը կասկածելի կը մնայ: Մուստաֆա Քեմալի թերթը, Հաբէմիլէթը Միլլիէ, 1500 ցոյց կու տայ Մարաշի այժմեան հայ բնակչությունը... այնպէս կը կարծուի, թէ Մարաշի և շրջակայքի ջարդի գոհերուն թյուր 16,000էն 24,000ի մէջ կը դիտուի» [1, ֆ. 430, ց. 1, գ. 295, թթ. 17-18]:

Կիլիկիայում բնակվող հայերի ճակատագրով մտահոգ էին նաև հայ քաղաքական կուսակցությունները¹⁴, որոնք նշում էին, որ Կիլիկիահայերի վիճակն օրեցօր անտանելի էր դառնում [15, էջ 67]: Թուրքերը մեծ վնասներ էին հասցնում հայերին: Դրությունն աւելի սպառնալից էր դառնում, «որովհետև ֆրանսական զորքերը խուսափում էին ամեն տեսակ յարձակումից», քրիստոնեաներն էլ ստիպուած հավաքվում էին այն կառոյցներում, որոնք պաշտպանում էին հայերը [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թթ. 52]:

Կարճ ասած՝ Կիլիկիայում վիճակն օրհասական էր դառնում. հայության գոյության և ազգային կյանքի պատվարներից Կիլիկիան «Հայկական Հանրապետության սահմաններէն դուրս սպրող լիահոծ հայության միակ կեդրոնը կը մնայր» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թթ. 19-39]: Եվ եթե հայերի անտարբերության կամ «նյույթապաշտ և օգտածարաւ դիւանագիտութեան մը կամաւոր կուրացումներուն և դիտումնաւոր քաղաքականության հետևանքով բնաջնջումի դատապարտուի Կիլիկիոյ հայությունն ալ, այն ատեն իրապէս յաղթանակած պիտի լլլայ գերմանական սիսթէմով և թրքական միջոցներով ձեռնարկուած և հայ ազգին վրայ ի գործ դրուած մահափորձը» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թթ. 19-39]: Այսինքն՝ ի սկզբանե սխալ էր Անտանտի կողմից օսմանյան տիրույթները երեք գոտիների բաժանելը¹⁵: Իսկ

¹³ Մուշեղ Մերոբեան (1869 - 1951, Նիկոսիա), հասարակական և եկեղեցական գործիչ, պատմաբան: ՌԱԿ կուսակցության հիմնադիրներից: Եղել է Արաբկիրի և Աղանայի հոգևոր առաջնորդ: 1910 թվականից ապրել է ԱՄՆ-ում, Բոստոնում հիմնել է թեմ և ընտրվել հովիվ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ստեղծել է միջկուսակցական մարմին, կազմակերպել հայկական կամավորական շարժման համար միջոցներ հանգանակելու գործը: Պատերազմից հետո աշխատել է Կիլիկիայում և Կիպրոսում: Հրաժարվելով հոգևոր կոչումից (արքեպիսկոպոս)՝ զբաղվել է մանկավարժական, գիտական և հրապարակախոսական գործունեությամբ: Գրել է պատմագիտական աշխատություններ հայ ազգային ազատագրական շարժման և Հայկական հարցի պատմության վերաբերյալ: Հեղինակ է «Դիտումներ և դատումներ», Պէրյուժ, 1932, «Իրականության լոյսին տակ», Գահիրե, 1926, «Հայկական հարցը և անոր փուլերը», Պէրյուժ, 1937, «Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով», Գահիրե, 1948, «Հայաստանի անկախութեան առթիւ», Գահիրե, 1950 և այլ աշխատությունների:

¹⁴ Մասնավորապես ռամկավարների և Կիլիկիայում նրանց ծավալած ազգանպաստ գործունեության մասին տե՛ս [29]:

¹⁵ Օսմանյան կայսրության տիրույթների բաժանման մասին Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը (նախագիծը պատրաստել էին անգլիացի Մարկ Սայքսն ու ֆրանսիացի ժորժ Պիկոն) կնքվել է 1916-ին՝ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև: Երբ 1916-ի փետրվարին ռուսական բանակը գրավեց Էրզրումն ու Բիթլիսը և մոտեցավ Միջագետքի մատույցներին, դաշնակիցները շտապեցին իրենց կայացրած համաձայնության մասին տեղյակ պահել Ռուսաստանին: Եռակողմ բնարկումներից հետո, **1916-ի մարտի 9-ին**, դաշնակիցները ստացան Ռուսաստանի համաձայնությունը՝ հավաստելով ռուսների իրավունքները Կ. Պոլսի, նեղուցների և Արևմտահայաստանի Էրզրումի,

ավելի վտանգավոր էր այն, որ մեծ հողաքաժնի հովանավոր Ֆրանսիան էլ աստիճանաբար թեքվում էր դեպի թուրքական կողմը: Այսպես, «Այնթապի և Մարաշի մէջ վար առնուած թրքական դրօշակը նոյն պահուն նորէն գետեղուեցաւ ֆրանսականին տեղ, թուրք կառավարության ձեռքով» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թ. 19]: Գրավյալ տարածքների հյուսիսային գոտում «Մուլթաֆա Զենայի մարդիկը ժողովուրդը թունադրած էին» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թ. 20] և կառավարիչ նշանակուեց «Զաի.../խտան/ Անտրէ, որ իր շեշտուած թրքամոլութեամբ քաջալերողն եղած էր Հոկտ. 16ին ամանտեսան չեթէներու կառարած ջարդերուն» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թ. 20]: Տամատյանն ու Ադանայի Հայ Ազգային Միությունը մի քանի անգամ շեշտել էին Կիլիկիայում ֆրանսիական սխալ քաղաքականության հետևաքնների մասին և «կարգ մը սրբագրություններ էին թելադրած երկրին անդորրությանն ու ապահովությանը համար» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թ. 20]: Ֆրանսիացի ղեկավարները սակայն, չտեսնելու էին տալիս իրենց զօրականների ձախող քաղաքականության հետևանքով «ֆրանսական prestige /հեղինակությունը/ անանկություն դատապարտուած է» և թէ «դէպի ուր կը գահավիժէր երկիրը» [1, ֆ. 430, ց. 1, գ. 817, թ. 22]: Այդ պայմաններում հավատալորույս ժողովրդի փրկության միակ հույսը մնում էր «վաստիկ իր սեփական ուժերուն և զանոնք յարմարցնել ինքնապաշտպանության զօրեմարտի և անկախութեան հռչակման համար» [1, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 99]:

1920 թ. Կիլիկիայում արդեն ավելի քան 150 հազար հայ էր սպրում: Սակայն ֆրանսիական վարչությունն անթաքույց սիրաշահելով թուրքերին գնեցրալ Ժան Տյուֆֆոյի բերանով հայտարարում էր, որ «Մենք, ֆրանսացիներու, Կիլիկիան գրաւելու չեկանք: Մենք, ֆրանսացիքս, էինք դաշնակիցներու ձեռքէն Պոլիսը առնողը և թուրքերուն յանձնողը» [1, ֆ. 430, ց. 1, գ. 826, թթ. 1-5] և որևէ գործուն միջոց չձեռնարկեց հայերի անվտագությունն ապահովելու համար: Ավելին, Օսմանյան կայսրության մասնատմանը ձեռնամուխ եղած Անգլիային հակառակ, Ֆրանսիան ձգտում էր պահպանել նրա

ինքնուրույնությունը և դրանով փաստորեն մեծ վնաս հասցրեց Հայկական հարցի լուծմանը: Պատճառը ֆրանսիական կապիտալի շահագրգռվածությունն էր և գերիշխող դիրքը թուրքական տնտեսությունում: Օսմանյան պարտքի 60,31 տոկոսը բաժին էր ընկնում Ֆրանսիային (Անգլիայինը՝ 14,9 էր, Գերմանիայինը՝ 14,19) [27, էջ 402]: Ֆրանսիան առավելություն ուներ նաև ներդրած կապիտալներով: Դրանք կազմում էին 50,58 տոկոսը (Անգլիայինը՝ 14,36, Գերմանիայինը՝ 35,06) [35, 475-476]: Ինչպես նշել է Բեռլինում թուրքական դեսպան Մուխթար փաշան, «Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր հատկապես նրա դրամատերերի բուռն ցանկություններով» [26]:

Անկախության ակտից հետո ֆրանսական իշխանություններն այլևս նրա լիազորությունները 1920 թ. օգոստոսի 5-ին ՄԱԿի դաշնագրի ստորագումով միակողմանիորեն վերջացած էին համարում: Իսկ իրականում միայն 1920 թ. սեպտեմբերի 28-ին պաշտոնապես դադարեցվեց նրա լիազոր ներկայացուցչի առաքելությունը: Սակայն Տամատյանն անպաշտոն կերպով մինչև 1921 թ. հուլիսի 21-ը շարունակեց գործել Կիլիկիայում: Իսկ վերջնականապես, վերջ տալով երեք տարիների իր աստանդական կյանքին, այնտեղից հեռացավ 1921 թ. հուլիսի 25-ին:

Եզրակացություններ

1. Հայ ազգային-ազատագրական պայքարի աննկուն մարտիկ Միհրան Տամատյանի գործունեությունն անմնացորդ նվիրումի օրինակ է և ուսանելի շատ կողմեր ունի:

2. Նրա ազգաշահ կենսագրության կարևորագույն փուլերից է Կիլիկիայում 1918-1920 թթ. ծավալած կազմակերպչական, հայապահպանման, անկախ ու ազատ հայրենիք ունենալու և դիվանագիտական բազմակողմանի գործունեությունը:

3. Կիլիկիայում հայերին ներկայացուցիչ ունենալու առաջարկն արել են ֆրանսիացիները, իսկ այդ պաշտոնը Տամատյանին վստահելու գաղափարը՝ Հովհաննես Խան-Մասեհյանը: Իսկ այդ առաքելությամբ Տամատյանին Կիլիկիա ուղարկելու հարցը Պողոս Նուբարն առաջին անգամ առաջ քաշեց 1918 թ. հոկտեմբերի 14-ին:

4. Հայոց պետականության անսակարկ նվիրյալ Մ. Տամատյանի գործունեությունը ժամանակակիցների ու հետագա սերունդների կողմից հիմնականում բարձր է գնահատվել: Բացառություն են թերևս երկու դրվագներ. ա) Հանրնի եղերական կոտորածում նրա ունեցած «պատասխանատվության», որը ինչպես ցույց տվեցինք մեր նախորդ հոդվածներից մեկում [30], անհիմն զրպարտություն է և երկրորդը, բ) Անկախության «արկածախնդիր» ակտին նրա մասնակցությունն է, որը նույնպես պարզաբանել

Տրապիզոնի, Բիթլիսի, Վանի նկատմամբ (Գեղին գոտի): Կիլիկիան, Փոքր Հայքն ու արաբական տարածքները ենթակա էին **անգլո (Կարմիր գոտի)-ֆրանսիական (Կապույտ գոտի)** բաժանման: Ամիսներ անց Օսմանյան քարտեզի վրա ի հայտ եկան **Կանաչ** (հարավ-արեւմտեան Անատոլիա) ու «**Շ**» (Անատոլիայի կենտրոնական մասը) **գոտիները**, որոնք բաժին էին ընկնելու Գերմանիային լքած ու դաշնակիցներին միացած **Իտալիային**: Այդ մասին նրանք հայտարարեցին 1917-ի հունվարի 10-ին, իսկ կազմաբանդման մասին՝ 1917 թ. փետրվարի 27-ին: Համաձայնագրի բովանդակությունը հասարակայնությանը հայտնի դարձավ 1917-ի նոյեմբերի վերջին, երբ խորհրդային կառավարությունը հրապարակեց դրա տեքստը և չեղյալ համարեց այն:

և ժխտել ենք մեր նախորդ ուսումնասիրություններից մեկում [31]: Արխիվային փաստաթղթերում, տպագիր սկզբնաղբյուրներում, հուշագրություններում, ուսումնասիրություններում և մամուլում եղած հրապարակումներում առկա տվյալների մանրակրկիտ ծանոթանալով նրա կյանքի ու գործունեության բոլոր ծայրերին, կարող ենք մեծ ափսոսանքով նշել, որ Տամատյանի մեծագույն «սխալը» եղավ այն, որ դա համարելով ինքնագովություն, նա չուզեց իր հուշերը գրել¹⁶: Ակնհայտ է, որ Տամատյանի ծայրահեղ համեստությունը մեծ վնաս պատճառեց հայոց պատմության շատ հարցեր լուսաբանելու համար, որովհետև «*Կիլիկեան Երազին» առթած խանդավառությունը ու յուսաբեկությունը ոչ որ իրեն չափ սպրեցաւ, ոչ որ իրեն չափ մօտէն տեղեկություն ունեցաւ...*»:

Օգտագործված աղբյուրներ և գրականություն

Արխիվներ

1. Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ):
2. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետ՝ ՄՄ):
3. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ):
4. **Ավագյան Գ.**, Կիլիկիան 1918-1922 թթ. փաստաթղթերի ժողովածու (ղեռևս անտիպ նյութերն օգտագործման համար սիրով ինձ է տրամադրել հեղինակը):

Տպագիր սկզբնաղբյուրներ

5. Ազգային Պատուիրակության գործունեությունը 1915-1916 (վաերագրեր), ներածական եւ ծանօթ.՝ Վ. Ղազարեան, Պէյրուք, հրատարակություն Հ.Բ.Ը. Միություն Վահրամ Ապտալեան մշակության հիմնադրամի, 2017:
6. Դրօշակի նամակը Մ. Տամատեանին, Ռոստոմ Նամականի, մահուան վաթսուամեակին առթիւ, իմբ.՝ Հր. Տասնապետեան, Պէյրուք, հրատ. Հ.Յ.Դաշնակցության, Համազգայինի Վահե Մեթեան տպարան, 1979:
7. **Պէլլերեան Ա.**, Մեծ տերությունները, Օսմանեան Կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում, ֆրանսերէնից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, հ. 1:
8. Ռամկավար Ազատակն կուսակցության կազմաւորումն ու գործունեությունը 1915-1951 թթ., փաստաթուղթերու ժողովածու, Ե., 2022:
9. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Հտր. 13, Պէյրուք, Համազգայինի Վահե Մեթեան տպարան, 2020:

Հուշեր

10. **Տամատեան Մ.**, Իմ յուշերէս, Պէյրուք, 1985:

¹⁶ «Արև» օրաթերթի 22 Օգոստոս 1970 թ. օգոստոսի 22-ի համարում «Միհրան Տամատեանի յուշագրությունը ինչպէս սկսաւ և ինչու մնաց անաւարտ» Բարունակ Թովմասյանի հրապարակման մեջ պարզաբանվում է, թէ ան չէր անսար կուսակցական ոչ իր ընկերներուն յորդորներուն և ոչ ալ երիտասարդներուն պնդումներուն, որ գոնէ յուշեր թելադրեր»:

11. **Փափազեան Վ.**, Իմ Յուշերը, Պոսթըն, 1950, հ. Ա:

Ուսումնասիրություններ

12. **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, 2005, 246 էջ:
13. **Թորոսյան Շ.**, Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1987:
14. **Իզմիրլեան Կ.**, Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսություն), Պէյրուք, 1964:
15. **Կենճեան Ա.**, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցությունը եւ կիլիկեան ինքնավարութեան ակտը, Պէյրուք, տպարան Արարատ, 1958:
16. **Ղազարեան Վ.**, «Իբրեւ ներածություն Կիլիկեան երազին նաւորդը»՝ Մ. Տամատեան, Իմ Յուշերէս, Պէյրուք, հրատարակիչ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Պէյրուքի Միհրան Տամատեան ակումբ, 1985:
17. **Միքայելյան Գ.**, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017:
18. **Չելեպեան Ա.**, «Յեղափոխական դեմքեր», Միշիկըն, 1991, 2-րդ հրտ., Մաուքֆիլդ, 1994:
19. **Սահակյան Ռ. Գ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, 325 էջ:
20. **Մերոբեան Մ.**, Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Գահիրէ, 1948:
 - 20.1. **Մերոբեան Մ.**, Դիտումներ և դատումներ, Պէյրուք, 1932:
 - 20.2. **Բաբազեան Է.**, Ինքնակենսագրություն և Յուշեր, Գահիրէ, 1960:
 - 20.3. **Պետրոսեան Մ.**, Կենսագրություն Ապահ Պետրոսեանի եւ քննական պատմություն Չեյթունի 1895ի պատմական մեծ ապստամբութեան, Գահիրէ, 2020:
 - 20.4. **Մալեզեան Վ.**, Ճամբուս Ծայրը, Փարիզ, 1955:
 - 20.5. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Երևան, Տիգրան Մեծ տպարան, 2009թ.:
21. **Սարգսյան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019:
22. **Սարգսյան Ս.**, Միհրան Տամատեանի հրապարակախոսությունը, Ե., «Տիր» հրատարակչություն, 2020:
23. **Վարանդեան Մ.**, Հ.Յ.Դաշնակցութեան պատմություն, Ա. եւ Բ. Հատորներու միացեալ հրատարակություն, Բ. Հրատարակություն, Պէյրուք, 2013:
24. **Տեփոյեան Պ.** «Միհրան Տամատյան (1863-1945)», Գահիրէ, 1964:
25. **Յափուճեան Ա.**, Հայ Ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., մաս Ա., Գահիրէ, հրատարակչությունը նշված չի, 1977, 1086 էջ:
26. **Боев Ю. А.**, Ближний Восток во внешней политике Франции 1898-1914, Очерки истории

дипломатической борьбы Франции за Ближний Восток. Киев, 1964 336 стр.:

27. **Ллойд Джордж**, Правда о мирных договорах, том II, Москва, Издательство иностранной литературы, 1957. 560 стр.:

Հողվածներ

28. **Թովմասյան Բ.**, Միհրան Տամատեանի յուշագրութիւնը, ինչպէս սկսաւ եւ ինչու մնաց անաւարտ, տե՛ս «Արեւ» թերթ, թիվ 15706:
29. **Սարգսյան Ս.**, Ռամկավարների գործունեությունը Կիլիկիայում (1918-1920 թթ.), Էջմիածին ամսագիր, թիվ 3, 2022:
30. **Սարգսյան Ս.**, Հանրնի հերոսամարտը, պարտության պատճառները և պատասխանատվության հարցը, Պատմաբանասիրական հանդես, թիվ 2, 2022, 34-46 էջեր:
31. **Սարգսյան Ս.**, Անկախության հռչակումը Կիլիկիայում (1920 թ.), «Երկիր և տարածաշրջան», թիվ 5, 2022, 37-44 էջեր:
32. **Տեփոյեան Պ.**, Մեր մեծ ծերունին, տե՛ս «Արեւ» թերթ, թիվ 8145:

33. «Արեւ» թերթ, 15706, 5630, 1937 թ., թիւ 8145, 5630, 1945 թ. թվեր:

34. «Կիլիկիա», 3. VI 1919:

35. «Новый Восток», թիվ 3, 1923:

Կայքեր

36. «Կիլիկիան և հայերը՝ թուրքական մուրնի եւ ֆրանսիական սալի արանքում. 1920-1921 թթ.», <https://www.aniarc.am/2020/07/04/cilicia-armenians-1920-1921-my-book-chapter/>:
37. **Մանջյան Հ., Գրիգորյան, Հ.** Կիլիկիայի անկախության հռչակագրի 90-ամյակը, <https://www.aravot.am /2010/08/07/350916/90>:
38. **Փաշաբեգյան, Տ.** Նվիրվում է Կիլիկիայի անկախության հռչակագրի 100-ամյակին, <http://erit.am/news/hy/89928>:
39. <https://keghart.org/aharonian-damadian/>:

Տճանա/Հանձնվել է՝ 02.02.2023

Рецензирована/Գրախոսվել է՝ 12.02.2023

Принята/Ընդունվել է՝ 17.02.2023